ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 7/8

8 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց «Բիզնես Սուփորթ Թիմ» ՍՊԸ 18.06.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը 2014 թ-ի ընթացքում շահութահարկի կանխավճարի մասով պարտավորությունները դադարեցնելու վերաբերյալ:

«Բիզնես Սուփորթ Թիմ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Բիզնես Սուփորթ Թիմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) աշխատում է արտահանման ոլորտում: Նախորդ տարի աշխարհի տարբեր երկրներում ընկերությունը շահել է մի շարք խոշոր տենդերներ և աշխատել է բավականին ինտենսիվ: Այս տարի՝ 2014 թ-ին, պատկերը բոլորովին այլ է, որևէ նոր տենդեր ընկերությունը չի շահել, իսկ եղած պատվերները սպառվել են: Արդեն վեցերորդ ամիսն է ընթանում, սակայն ընկերությունն արտահանել է միայն մեկ անգամ և շատ փոքր խմբաքանակով: Մոտ ապագայում ակնկալվում է ուղարկել ևս մեկ նույնաչափ փոքր խմբաքանակ, սակայն այնուամենայնիվ 2014-ի արտահանումների ծավալը անցած տարվա նկատմամբ մոտ 10 անգամ փոքր է լինելու:

Վերջերս, հարկային տեսչության մասնագետը տեղեկացրել է, որ ըստ օրենքի, հիմնվելով 2013 թ-ին գոյացած շահույթի և վճարած շահութահարկի գումարի, ընկերությունը պետք է 2014 թ-ի համար յուրաքանչյուր եռամսյակ վճարի կանխավճար:

Տեղեկացվում է, որ ընկերության վրա այսօր դրված է բավականին խոշոր ֆինանսական պարտավորություն, որը հնարավոր չէ վճարել, դրան գումարած ավելանում են օրական 0.15% տոկոս տույժերը, որի հետևանքով ընկերությունը կանգնում է փաստի առջև՝ աշխատել փոքր հզորությամբ, թե լուծարվել:

Հաշվի առնելով վերընշված իրադրությունը՝ ընկերությունը խնդրում է միջամտելու շահութահարկի կանխավճարի մասով ներկայացված պարտավորությունը դադարեցնելու գործառույթում: Ընկերությունը պարտավորվում է վճարել հարկերը ընթացիկ տարվա շրջանառության վրա հիմնվելով, շահութահարկի մասին օրենքի շրջանակներում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն. «1. Տարվա ընթացքում հարկատուն պարտավոր է կատարել շահութահարկի կանխավճարներն՝ սույն հոդվածով սահմանված կարգով: ...

2. Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի

հաշվարկային մեծության 18.75 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ »:

Քննարկվող դեպքում «Բիզնես Սուփորթ Թիմ» ՍՊԸ-ի 2013 թ-ի շահութահարկի փաստացի գումարը կազմել է 10.304.679 դրամ: Հետևապես, 2014 թ–ի յուրաքանչյուր եռամսյակի շահութահարկի կանխավճարի չափը կազմում է 1.932.127 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ընկերության կողմից սահմանված ժամկետներում և չափով վճարվել են շահութահարկի կանխավճարի գումարները:

Ինչ վերաբերվում է ընկերության գանգատով բերված միջնորդությանը 2014 թ-ի ընթացքում շահութահարկի կանխավճարի մասով պարտավորությունները դադարեցնելու վերաբերյալ, ապա հարկ է նշել, որ շահութահարկի կանխավճարի պարտավորությունները դադարեցնելու նորմ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Հետևապես, Հանձնաժողովն իրավասու չէ դադարեցնել շահութահարկի կանխավճարի հաշվարկը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Բիզնես Սուփորթ Թիմ» ՍՊԸ 18.06.2014 թ-ի գանգատը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**